

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առօրեայ օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վասնզաւոր դրութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ երեւանից. Նամակ Շուշուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Չինական գործեր. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. 1899 թ. Երեւանի նահանգում:

ՎՏԱՆԳԱՌՈՐ ԳՐՈՒԹԻՒՆ

Քաղաքական աշխարհը յուզմունքի և լարված տրամադրութեան մէջ է: Չինական գործերը անսպասելի կերպով սուր կերպարանք ստացան և եւրոպական պետութիւնների համար ստեղծեցին մեծ ռիսկեր: Եւրոպական պետութիւնները՝ Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Աւստրիա և Իտալիա, Ամերիկայի Միացեալ-Նահանգները, Նապոլիոն, բոլորն էլ շահեր ունեն Չինաստանում և քաղաքական ու առևտրական հաշիւներ: Նրանցից իւրաքանչիւրը մշակում է իր ապագայ ազդեցութեան համար այդ երկրում մեծ մեծ ծրագրեր: Մրցութեան մէջ աջող հանդիսանալու համար զիւսնադրութիւնը հանում է խորամանկ գործողութեան և քաղաքագիտական պատրուակների մի ամբողջ սիստեմ, որ, սակայն, ներկայ դէպքերի շնորհիւ, միանգամայն փոքրութեան է մասնակի: Չինական հարցը, ինչպէս և արևելեան հարցը, իսկապէս դարձել է եւրոպական հարց: Պետութիւններից ոչ մէկը չի թողնում, որ առանց նրա համաձայնութեան կարգադրվեն չինական գործերը և ոչ որ չի համաձայնի, որ Չինաստանը ինքը լինի իր պետութեան և ազգաբնակչութեան գործերի բացառիկ ղեկավարողը: Եւրոպական կառավարութիւնները ընտելացել են այն հայեացքի հետ, որ նրանք ևս մի տեսակ տէրեր են Չինաստանում և որ նրանք ունեն հովանաւորողների և արտօ-

նութիւն վայելողների իրաւունքներ չինական հողի այս և այն մասերում մեծ և փոքր չափով: Այդ տեսակէտով ներկայումս եւրոպացիները կռւում են ոչ միայն չինացիների հետ, այլ և քաղաքավարի եւ լուս. գերպով նրանք կռւում են միմեանց հետ, աշխատելով ընդհանուր խրոտէմների մէջ պաշտպանել իրանց ձեռք բերած դիրքերը և նոր առաւելութիւններ ստանալ ապագայի համար:

Եւրոպական քաղաքագիտութիւնը մեծ հմտութեամբ և աշխրջութեամբ պէտք է տանի իր գործերը, կռւելով իր քայլերը, որպէս զի չինական հողում եւրոպական միացած ոյժով կռւել մղելուց յետոյ, անհամաձայնութիւն չը ծագի շահագրգռված պետութիւնների մէջ և զէնքի շարժումները չը տեղափոխվեն աւելի ընդարձակ դաշտ և չը բռնկեն եւրոպան պատերազմի սարսափելի կրակով:

Պատերազմի համար շատ նիւթ կայ դիզված, միջազգային թիւրիմացութիւնների թիւր անհամար է և տարիներով ժողովված դժգոհութիւնների կոյտը չափազանց մեծ է, սակայն և պատերազմի հետեւները կարող են շատ վատագուր և կորստաբեր լինել, հիմնովին կերպարանափոխելով եւրոպայի քաղաքական քարտէզը: Իհարկէ, ապա այդ անորոշութեան մէջ թաղված սարսափելի աղէտի ուրուական է, որ վարկեցնում է եւրոպական զիւսնադեմներին և յետ է կասեցնում նրանց անգործ և չափազանց անճշտ պատուաբան քայլերը: Ինչպէս դուրս կը գայ եւրոպական զիւսնադրութիւնը ներկայ քաղաքական կնճիռներից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Երէկ մենք խօսեցինք անբարոյականացող

միջուկ պարսից և Մակուի խանութեան սահմանները, ծածկված են բամբակի ցանքերով և այս տարածութիւնը աշուղ բերքի ժամանակ երեւանի նահանգին տալիս է 500,000 պուդից աւելի բամբակ, օրինակ, 1890 թ.ին 26,065 պուդ, իսկ անաշուղ բերքի ժամանակ հասկանալի է, որ այդ չափը իջնում է: Եւ ահա այդ չափերը չիւծը ընդունելով, կարելի է գաղափար կազմել տարկայ անբերրիութեան աստիճանի մասին. ուստի մենք դիմենք թւերին, առաջ բերելով այդ, որքան որ հնարաւոր է եղել մեզ ձեռք բերել: Միջանկեալ կերպով չենք կարող մեր գաղափարը չը յայտնել այն տարօրինակ ծածկամտութեան վրա, որ պահպանում են բամբակի գնողները իրանց դնած բամբակի քանակութեան պիտի վերագրել իւրաքանչիւր սխալ, եթէ այդպիսիները մտած լինեն մեր բերած թւերի մէջ: Բերքի մասին որոշ հասկացողութիւն կազմելու համար վերցնենք նախ վերջին երկու տարիները, առաջ բերելով իւրաքանչիւր տարվայ համար առևտրական տնտեսի ջոկ-ջոկ ցուցակները իրանց դնած բամբակի քանակութիւններով. ապա կազմենք մեզ ցանկ կալի համեմատական չափերը: Ի հարկէ, այդ թւերը առաջ ենք բերում հարկաւորների ճշգրտութեամբ, բերքի ընդհանուր չափը որոշելու խնդրում այնքան էլ մեծ նշանակութիւն չը տալով մանրակրկիտ հաշիւներին:

Գնել են հետեւեալ ֆիրմաները.

	1898—1899	և 1899—1900
Եղը. Գեղորդեանցները	7,500 հակ	8,000 հակ
Պօզնանսիկ	9,000 »	7,200 »
Գիրչեբեկ	3,200 »	3,000 »
Կարգինկին	2,200 »	2,200 »
Օհանեանց	3,000 »	1,000 »
Չիթախով	5,000 »	2,000 »
Ճարնազարեանց	1,000 »	1,200 »
Աւետիսեանց	1,300 »	— »
Արդումանեանց	— »	700 »

խմբագրների մասին, որոնք մի և նոյն չափերն են հանդիսանում թէ Բօսֆօրի և թէ Կուրի ափերում: Ամեն անգամ, երբ հարց է լինում գրական ապակաւութիւնների դէմ գործելու միջոցների մասին, առաջ է գալիս այն տարրը, որին մենք սկզբից և եթ տուել ենք մեծ նշանակութիւն: Դա ընթերցողն է: Բառի սահմանափակ մտքով ընթերցողը—դա այն մարդն է, որ կարգում է տպագրական մամուլը արտադրութիւնները: Նա չը կայ հրապարակի վրա, թագնված է վարագործի ետեւում, նա փող է տալիս, առնում է այս կամ այն լրագիրը, այս կամ այն գիրքը և գրանով վերջանում է ամեն ինչ: Բայց ընթերցողը, եթէ նայենք նրան իբրեւ մի ոյժի, առանց որի չէ գործող գոյութիւն սեննալ ոչ մի գրականութիւն, միայն չէ կարգում, այլ և հասարակական յայտնի պարտաւորութիւններ է կրում իր վրա: Նրա վերաբերմունքից է կախված շատ և շատ բան գրական աշխարհում, ուստի և զիտակցութեամբ զինված, ինքնաճանաչ, իր պարտքը լաւ հասկացող ընթերցողը դառն մի մեծ հանրային գործիչ է: Եթէ գրական պարտեզում ծաղիկների հետ բուսնում են և որոնք, թունաւոր բույսեր, դրա պատճառը միայն այն չէ, որ գրական գործիչների դասակարգի, ինչպէս և ամեն մի ուրիշ դասակարգի մէջ կան արատաւոր անդամներ, այլ և այն, որ ընթերցողը իր պարտականութիւնը չէ ճանաչում, որ նա անտարբերութեամբ է նայում որոններին ու թունաւոր բույսերին: Գրական աշխարհը միայն գործնական չէ կազմված, այլ և ընթերցողներից. ուրեմն և այդ աշխարհի արտաբերման միայն գործիչներն չեն վերաբերվում, այլ և ընթերցողներին: Մենք շատ անգամ ենք առիթ ունեցել «Մշակի» էջերում որոշելու այն դերը, որ պիտի կատարէ մամուլը պարտաւորված, գիտակից ընթերցողի օգնութեամբ: Այժմ «Съвер. Курьеръ» լրագրի մէջ պ. Իվանովիչ խօսում է այն միաստուութեան մասին, որով ընթերցողը գանգատվում է գրական անկման, գրական վատ երևույթ-

ների դէմ, չը հասկանալով, սակայն, որ մեզքը իրանն էլ է:

Այն պակասութիւնները, որոնցից տառապում է ժամանակակից գրականութիւնը, ընթերցողի պակասութիւններն են: Ընթերցողը ինքն է խոստովանում այդ, համեմատելով գրականութիւնը հասարակական հայելիի հետ, բայց մամուլը դատապարտելիս միշտ մոռանում է իր այդ համեմատութիւնը և կրկնով կապիկի պէս գրական աշխարհակութիւնների պատճառը իր մէջ չէ որոնում, այլ հայելիի մէջ:

Մամուլի յարուցած հասարակական հարցերը կենսաբ. մէջ արձագանք կարող են գրտնել միայն զգայուն ընթերցողների միջոցով. իւրաքանչիւր կռիւ, որ մամուլի էջերից յայտարարվում է խաւարի, անբարոյականութեան դէմ, պիտի բանակ ստեղծէ ընթերցող հասարակութեան մէջ: Իսկ եթէ ընթերցողը անտարբեր է, եթէ նրա համար մի և նոյն է թէ ինչ դուրս կը գայ տպագրական մամուլի տակից, այն ժամանակ, ի հարկէ, կը բազմանան գրական որոնները, որոնք և կը խեղդեն ամեն մի կենդանի, ազնիւ գործունէութիւն, ստեղծելով անգոր ու թոյլ գանգատներ:

Այդ գանգատները չեն կարող ծառայել գրականական առաջադիմութեան, որովհետեւ ընթերցողը նոյն այդ առաջադիմութեան մէջ ոչինչ մասնակցութիւն չունի և նոյն իսկ չէ հասկանում, որ առանց իրան չը կայ էլ առաջադիմութիւն: Եւ գրական որոնները, որոնց սովորել է ընթերցողը, կը շարունակեն ծաղկել, մինչև որ ընթերցողը մէջ չը դարձնայ հոգեւոր ցորենի ճաշակը և մի և նոյն ժամանակ այն պարզ գիտակցութիւնը, թէ գրական որոնների ծաղկման պատճառը ինքն է: Այդ ժամանակ էլ կորոշվի գրական վերածնութեան հաւանականութիւնը, որովհետեւ մեր իրաւ գիտակցութիւնը կը լինի սկիզբ հասարակական առաջադիմութեան:

Այսքան մեծ ոյժ է ներկայացնում ընթերցողը: Պէտք է, սակայն, աւելացնել, որ հայոց հասարակութեան մէջ արդէն շատ նշաններ կան, թէ ինչ է կարող անել ընթերցողը. այդ նշանները մեր մամուլի փառքիկ ասպարէզում արժատ բռնած այն որոններն են, որոնք թը-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

1899 թ. Ապրիլի 1-ը երեւանի ՆԱՀԱՆԳՈՒՄ

Այժմ, երբ արդէն սկսվել է նոր տնտեսական տարին, աւելորդ չենք համարում մի թիւիւն ակնարկ գցել նախորդ 1899 թ. Երեւանի վրա: Երեւանի նահանգի համարեա բոլոր բերքերը, ինչպէս և ցորեն, գարի, խոտ, դարման, խաղող, պտուղներ, սպառվում են տեղի ու տեղը, հազիւ բաւականութիւն տալով մեր ժողովրդի կարիքներին, մանաւանդ վերջին տարիներում, երբ անբերրիութեան պատճառով այդ կարիքներին անգամ գոհացումն չէ տրվում: Արտահանվում է մեր նահանգից աննշան քանակութեամբ բրինձ, այն էլ դէպի Թիւրքիայի մի երկու նահանգները, այն է՝ Վան և Էրզրում: Բարտաւանվում է նոյնպէս օդի և գինի, բայց քիչ չափով: Միայն բամբակը արտահանվում է ամբողջովին, առանց մի թիւի կորստի: Այն հանգամանքը, որ բամբակը ամբողջապէս արտահանվում է և միւս բոլոր բերքերի համեմատութեամբ աւելի հեշտ և չափեկան կերպով է դրամի վերածվում, հետեւապէս դիւղացու կարիքները հոգալու հարցը դիւրացնում, մի մեծ պատճառ է, որ մեր նահանգի այն բոլոր տեղերը, որոնք նպաստաւոր են բամբակի մշակութեան համար, այժմ համարեա ամբողջապէս բռնված են բամբակի պլանտացիաներով: Այսպէս, բացի Նոր-Բայազէտ և Ալեքսանդրապոլ լեռնային կլիմա ունեցող գաւառներից, Երեւանի նահանգի միացած տեղերը, 30,000 դեցեաւանից աւելի տարածութիւն, որը գտնվում է Էջմիածնի, Սուրմալուի, Երեւանի, Ծարուր-Դարալագեանի և Նախիջևանի գաւառների սահմաններում և ձգված է Արարատեան դաշտի ամբողջ երկարութեամբ:

վայ ընթացքում ինչպիսի «առաջադիմու-
թիւն» է եղել մեր թեմական դպրոցում՝
չորսիւ ձեռնարանաւոր ուսուցիչները եւ
տեւի... Վեհափառի կատարած ներկայ քայլը
չառ-չատերի համակրութիւնն է առաջ բերել
Սակայն, ուսուցչական խումբը, որ հանգիստ
խղճով եւ կատարեալ անհոգութեամբ սպասում
էր հետեւեալ տարի եւս իր շահատակութիւն-
ները կատարելու, կաթողիկոսի անսպասելի
կարգադրութիւնը մեծ սրտացաւով ընդունեց
եւ մի հետագիւր ուղղեց էջմիածին... Իսկապէս,
ուսուցիչներից մի երկուսի դպրոցից հեռանա-
լը ցանկալի չէ եւ արժէ, որ ապագայ տետուը
դրանց կրկին վերահաստատէ իրանց պաշտօնի
մէջ, մանաւանդ որ այդ ուսուցիչները (ոչ ա-
ւելի քան 3-4 հոգի) վայելում են աշակերտ-
ների համակրանքը: Կաթողիկոսական կոնդա-
կով անցնելու ուսուցիչ հաստատված մի քա-
նի «գաստիրարական» դեռ այժմ էլ յամառու-
թեամբ պնդում են, որ իրանք խորարարական ծա-
ւի պէս հաստատված են դպրոցի մէջ եւ բնու-
թեան ոչ մի արհաւիրք չէ կարող դուրս կոր-
զել նրանց այդանպիսի... Միթէ իսկապէս իրա-
ւ է այդ, չը յուսանք արդեօք, որ լաւ հոգաբար-
ձութեան ընտրութեամբ դպրոցը կազմավոր-
այց բաղդախնդիրների ձանկերից:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ ուղարկված է Կովկասեան անգլոադո-
բուլթեան վերաբերութեամբ մի յատուկ աշխա-
տութիւն «Краткій очеркъ юстарыхъ про-
мысловъ Кавказа», որ կազմել է Ա. Փիրա-
լեան: Երեք քարտէզների վրա ցոյց են տրված
անգլոադոբուլթեան արհեստների տարածման
տեղերը Կովկասում: Բացի այդ, գետեղված են
մի քանի արհեստների մէջ գործադրվող գոր-
ծիքների նկարները: Ներկայ աշխատութեան
մէջ համառոտ կերպով նկարագրված են Կով-
կասի անգլոադոբուլթեան արհեստները եւ ար-
դիւնքները: Աշխատութիւնը կազմված է Պա-
րիզի ցուցահանդէսի առիթով Այդ ցուցահան-
դէսում Կովկասի անգլոադոբուլթեան ար-
դիւնքները ցոյց են հանված լիակատար կեր-
պով: Ներկայ աշխատութիւնը նպատակ ունի
ցուցահանդէս այցելողներին տալու ընդհանուր
գաղափար մեր երկրի անգլոադոբուլթեան ար-
հեստների մասին: Գրքովը բաղկացած է միջին
դիրքով 50 երեսից:

Յաճախ հարց էր յարուցվում, թէ արդեօք
թոշակաու ռուսացիները պէտք է տան բարձ-
րագոյն դպրոցների վարչութեանը ուսման վարձ,
թէ ոչ: Ժողովրդական լուսաւորութեան մի-
նիստութիւնը այժմ յայտնել է, որ այն թոշա-
կաուները, որոնք պարտաւոր են իրանց ու-
սումն աւարտելուց յետոյ որոշ ժամանակ ծա-
այակու՝ պէտք է ազատ համարվեն ուսման
վճարից:

Պետերբուրգում յունիսի 15-ից սկսվեց այն
անձանց խնդիրների ընդունելութիւնը, որոնք
ցանկանում են մտնել կամայն բժշկական ինս-
տիտուտ, եւ կը շարունակվի մինչեւ օգոս-
տոսի 1-ը: Ինստիտուտում 150 ազատ տեղեր
կան:

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են,
որ կառավարչական շրջաններում լուր է ստաց-
ված Կովկասից, որ Օլէքսիի նաւահանգստի
մօտ գտնված են քարածուխի ընդարձակ հանքեր:

Ստացանք Վազն էրի «Առաջինը» քնական
պատմութիւնը՝ մանկական գիրքը, որ թարգ-
մանված է ռուսերէնից: Գրքովը պատկերա-
ղարք է եւ բաղկացած է մեծագիր 29 երեսից:
Գինն է 12 կոպէկ:

Մօսկվայի առաջնադասական ընկերութիւնը
վճու է բժիշկների ձեռքով քննել Մօսկվայի
դպրոցների բոլոր աշակերտների առամները:
Այդ քննութեան նպատակն է հաւաքել եւ մը-
շակել վիճակագրական տեղեկութիւններ, եւ
պիտեւեալ հարկ եղած միջոցներ մշակել եւ
բիտաւարութեան առամների պահպանու-
թեան համար:

Մինչեւ յունիսի տարը հրատարակված տե-
ղեկութիւնների համեմատ, հանքային ջրերում
բժշկելու համար Պետերբուրգի գնացել են
2,210, Էստէնտուկի—715, Ժէլէզնովոյսկ—336,
Կիւրյուլովսկ—142, ընդամենը 3403 հոգի:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՈՎԻՅ ԺԱՅԻՆԻՍ ԺԱՅԻՆԻՍ
հետեւեալը: Անձրեւների պատճառով մարգա-

դետները եւ արօտների բուսականութիւնը
չառ առառ է: Խոտը արդէն սկսել են հնձել:
Խոտ կը ժողովիլի առասօրէն: Շուտով կը
սկսվի գարու հոնձը տաք տեղերում: Սակայն
Շիրակի վերին մասերում, Ախալքալաքի գա-
ւառին մօտ, ուր օդը աւելի ցուրտ է, սնձրեւ-
ները դանդաղեցնում են հաշտատիկի աճումը:
Սաստիկ կարկուտը վնասեց Ղզըլգոչի շուրջը
գտնվող գիւղերի ցանքերը: այդ գիւղերն են՝
Ղազանչի, Քոտաղբիւր, Ղզըլգոչ, Շիշթափա,
Չիֆտալու, Ղզըլթիւսա եւ այլն: Կարկուտը
յետոյ հացահատիկների արմատները նորից ծի-
ւեր տուին, որոնք դեռ չառ քիչ են զարգացել:
Եթէ օգոստոսին եւ սեպտեմբերին ցրտեր տե-
ղի ունենան, հոնձը կարող է սաստիկ վնասվել:

ՄԵՐՎԻՅԻՆ ԺԱՅԻՆԻՍ. «Ձը նայելով որ
Անդրկասպեան երկիրը հազարաւոր վերստե-
րով հեռու է Կովկասից, մենք զարձեալ կը-
բան զօրի չենք մնում թատրօնից: Ինչպէս
անցեալ տարի, նոյնպէս էլ այս տարի Մերվ
եւ Սոդոմիան անուամբնեւ՝ պ. Անդրանիկ
եւ տ. Անիւ, որոնք երկու ներկայացում տը-
ւին տեղիս սիրողների մասնակցութեամբ: Ա-
ռալին անգամ ներկայացրին «Հիւր» դրաման,
«200,000» լիզըլթը եւ «Միկի հարսանիքը»:
Երկրորդ անգամ իտալացին «Արչակ Բ.» ող-
բերութիւնը: Թատրօնը ծայրէ ծայր լինել էր:
Ձը նայելով, որ ներկայացումները քիչ բացա-
ռութեամբ այնքան էլ աջող չէր կարելի հա-
մարել, այնու ամենայն դրանից լաւ չը լի-
նելու պատճառով ժողովուրդը գոհ մնաց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Արտասահմանեան լրագիրները, քննադատե-
լով Չինաստանում տեղի ունեցած վերջին անց-
քերը, բաւական պէսմիտաւորութեամբ կրնան
են յայտնուի Վիեննայի «Berliner Tageblatt»
լրագրի թղթակիցը գրում է յունիսի 14-ից:

«Չինաստանից ստացվող աննպաստ լուրերը
ձեռնող տպաւորութիւն են գործում այստեղի
գիւղատնտիկական շրջաններում: Ի նկատի ու-
նենալով այն ընթացքը, որ ընդունեցին անց-
քերը, այստեղ չեն յուսաւորւում նրանով, որ
պետութիւնները շատ բան կը շահեն, եթէ
մինչեւ անգամ նրանց աջողիլ տիրել Պէկինին
եւ գրաւել նրան: Հինգ այդ ժամանակ ծա-
գում է մի հարց, թէ արդեօք կարելի է որ եւ
է բանակցութիւն սկսել մի կառավարութեան
հետ, որը այլ եւս ոչ մի իշխանութիւն չունի
Ֆրանսիական տեսանկյան ազգաբնակչութեան վրա:
Այդ հարցը լուրջ կերպով կարելի է տալ միայն
այն դէպքում, եթէ կընդունվի այն տեսակէ-
տը, որ պետութիւնները չեն պատերազմում:
Չինաստանի հետ, այլ նրանց զօրքերը կուրծ-
են միայն ապստամբների դէմ: Դժբաղդաբար,
չինական կառավարութիւնը բուռնաբարակմնե-
րից գտնուել բոլոր ջանքերը այժմ իղուր են
անցնում: Բոլոր վերջին տեղեկութիւններից
երեւում է, որ պետութիւնների զօրաբաժին-
ները ստիպված են լինում պատերազմել կա-
նոնաւոր զօրքերի դէմ, եւ դրանք արդէն այն
չինական զօրքերը չեն, որոնք փախչում էին
կապոնայինների առջեւից: Ըստ երևոյթի, զին-
ւորական այն իրթութիւնը, որ իւրացրել
են չինական զօրքերը գերմանական եւ ուս-
սաց վարժիչների ղեկավարութեամբ, հիմ-
նաւոր է եղել եւ հրաշալի արդիւնքներ է
տուել: Չինական զօրքը այժմ, ակնհեւ, ներ-
կայացնում է մի փակտոր, որին չէ կարելի
թիւթել վերաբերվել, եւ յամայն դէպք աւ-
կասկած է մնում այն փաստը, որ պետու-
թիւնների զօրքերը ստիպված կը լինեն պա-
տերազմել այդ զօրքի դէմ:

«Այժմ պարզ է, որ բոլոր պետութիւնները,
առանց բացառութեան, սխալ գործեցին: Ներ-
կառուան Պէկինին հաւանու համար պէտք է
ստպարել հանել մեծ զօրք եւ մի եւ նոյն ժա-
մանակ տրադ գործել Այդ պատճառով պէտք
է ցաւել այն բանի մասին, որ պետութիւն-
ները սկզբում չընդունեցին Եւրոպայի առա-
ջադրութիւնը—ուղարկել 20 հազար զօրք Չի-
նաստան: Եւրոպայի կարող է երեք օրից յե-
տոյ այնքան զօրքեր ալ ինչպէս Չինաստան,
որքան հարկաւոր է պետութիւնների գործո-
ղութիւնների աջողութիւնը ապահովելու հա-
մար: Բայց նրանից, որ Եւրոպայի կարող է
անհրաժեշտ ոյժեր ուղարկել, նա միակ զին-
ւորական պետութիւնն է, որից Չինաստանը
դեռ վախենում է, որովհետեւ նրա յիշողու-
թեան մէջ դեռ թարմ են վերջին պատերազմի
տպաւորութիւնները: Ի նկատի ունենալով այդ

բոլորը, այստեղի գիւղատնտիկական շրջաննե-
րում կարծում են, որ պետութիւնները հար-
կադրված կը լինեն որքան կարելի է շուտ առ-
Եւրոպայի նրա պահանջած լիազօրութիւնը:
Նախկին կառավարութեան պահպանութիւնը
Չինաստանում չէ կարող լինել պետութիւննե-
րի առանձին հոգածութեան առարկայ, եւ այժմ
գիւրար թէ հարաւոր լինի խնայել այդ կա-
ռավարութիւնը, որովհետեւ գործերը շատ
սուր կերպարանք ստացան»:

«Temps» լրագրում տպվեց պատգամաւոր
գիւտորինիլ յօդուածը, որը Ֆրանսիայի պա-
տուիրակին էր Հաւաքայի կոնֆերանսայում:

«Չինաստանում մենք հնձում ենք այն, ինչ
որ ցանկ էինք արդէն մի քանի տարի եւ-
րոպան բացարձակ զբաղված է Չինաստանը
բաժան բաժան անելու գործով: Նա իր դէմ
զինուորից Եւրոպայի կայսրութեան անհամար
բազմութիւնը, որը միայն նշանին էր սպասում
ապստամբութիւն սկսելու համար: Ներկայումս
կառավրվում է առաջին գործողութիւնը, գրա-
մայի նախաբանը: Որքան էլ տխուր լինի եւրո-
պացիների կրած կոտորածը, բայց դա սիրգն
է միայն: մենք անհեկու ենք դեռ ուրիշ անս-
պասելի դէպքեր—բազաբական, սօցիալական,
անուսական: Եթէ խօսելու լինեք միմիայն քա-
ղաքական անսպասելի դէպքերի մասին, Չինաս-
տանում կարող է պատահել երկուսից մէկը: կամ
չինական ապստամբութիւնը կը տարածվի եւ
եւրոպական պետութիւնները հարկադրված կը
լինեն ներթարկել վտանգաւոր արհեստու-
թեան—զօրք ուղարկել Չինաստան, իրանց
զինուորիցի շատ արհես թափել եւ շատ փող
ծախսել, այն փողը, որ պատկանում է հարկ
վճարողներին, կամ, որ եւս աւելի հաւանական
եմ համարում, ապստամբութիւնը կընկնի, եւ
այն ժամանակ պէտք է երաշխաւորութիւն
գտնել ապագայի համար, զանազան պետու-
թիւնների կրած վնասները յետ պահանջել:
Բայց ինչպէս անել այդ: Ի՞նչ կերպ փրկարար
ճշուած գործ դնել չինական կառավարութեան
վրա, որին մենք ինքներս թուլացրինք: Նա կը
խուսափի, եւ եթէ մինչեւ անգամ ենթադ-
րենք, որ նա բարի ցանկութիւն ունի, նա չէ
կարող ստիպել իր հպատակներին հնազանդվել:
Ուրեմն ուրիշները պէտք է նրա տեղը բռնեն:
Բայց ով: Ֆրանսիան, Ռուսաստանը, Անգ-
լիան, Գերմանիան: Բայց դրա համար ան-
հրաժեշտ էր, որ կազմվէին գոնէ սաղմային
դրութեան մէջ Եւրոպայի Միացեալ-Նահանգ-
ներ: Այլապէս կը ծայրէ «ծայրագոյն Արեւել-
քի» հարց, որը աւելի նշանաւոր է, քան
տիրահաշակ «արեւելեան» հարցը»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Գերմանական թերթերը հաղորդում են,
որ Գերմանիայի բոլոր ծայրերից անգլիկ քա-
նակութեամբ խնդիրներ են ստացվում վիճուոր-
ներից եւ օֆիցերներից, որոնք ցանկանում են
իրեն կամաւոր դնալ Չինաստան: Օրէնքով
ծովի այն կողմը ուղարկվող գերմանական ցա-
մաքային զօրքը պէտք է բաղկացած լինի բա-
ցառապէս կամաւորներից: Մինչեւ այժմ 30,000
ղինուոր են օֆիցեր են խնդիրք տուել կամա-
ւոր դառնալու:

—Տակուի ամրոցների եւ Տեանձինի գրա-
ւումից յետոյ Պէկինը կը գտնվի պետութիւն-
ների ձեռքում: Միլիոնաւոր չինացիներ, որոնք
սպրում են Տեանձինից մինչեւ Պէկին, ուսու-
նելին պաշարները ստանում են Դուլին ծովի
վրայով կամ Կայսերական ջրանցքի միջով:
վրում է Պէկին գտնող Տեանձինի մէջ: Փանի որ
այժմ Տակու եւ Տեանձին գտնվում են եւրո-
պական պետութիւնների ձեռքին, չինացիները
ստիպված կը լինեն զինել, որպէս զի սովամահ
չը լինեն: Դրանով են բացատրվում այն ձիգե-
րը, որ չինացիները թափում էին Տեանձինը
գրաւելու համար:

—«НОВОСТИ» լրագրը հաղորդում է, որ
այժմ երկու գերմանական համալսարաններ—
Հէլդելբերգի եւ Ֆրէյբուրգի—ընդունում են
միջնակարգ դպրոցների աւարտած կանանց բո-
լոր բաժանմունքների համար, ի բայ չառած
եւ բժշկականը: Միջնակարգ դպրոցի աւարտ-
ման վկայական չունեցողները կարող են մտնել
իրեն ազատ լսող:

—Գերմանական լրագիրները հաղորդում են
այն ձառը, որ այս օրերս արտասանեց Օրէն-
բուրգեան նոր մեծ դուքսը պետական բարձ-
րաստիճան պաշտօնականներին առաջ: Դուքսը,
ի միջի այլոց, ասեց. «Ես ինձ համարում եմ
իմ օրէնքաւորներից: առաջին ծառայ եւ
խնդրում եմ ձեզ ինձ հետ միասին աշխատել
ժողովրդի համար, ինչպէս եւ ինքս կաշխա-
տեմ ձեզ հետ միասին, որովհետեւ ոչ թէ հա-
սարակութիւնը դոյութիւն ունի պաշտօնեա-
ների համար, այլ պաշտօնեաները հասարակու-
թեան համար: Բայց դրանից, եւ կը ցանկայի
ասել ձեզ էլի մի բան, որ եւս սիրում եմ ան-
կեղծ խօսելը, եւ այդ պատճառով խնդրում
եմ ձեզ ասել ինձ ուղղակի, ինչ որ դուք կար-

ծում էք, թէպէս դա ինձ անախորժ լինէր:
Արդեօք եւս միշտ լսածիս համեմատ կը դո-
ծեմ—դա ուրիշ հարց է: եւ չեմ կարող իւ-
րաքանչեւից ցանկութեամբ գոհացում տալ,
բայց եւս կը ցանկայի բոլորի կարծիքը լսել:
Պաշտօնեաներն էլ պարտաւոր են սպրել ընդ-
հանուր կեանքով հասարակութեան հետ եւ
մօտենալ նրան, որովհետեւ այդ կերպ նրանք
աւելի լաւ կիմանան նրա ցանկութիւնները:
Մի քիչ ժամանակից յետոյ եւս ինքս չառ կը
չըջեմ երկրի մէջ, եւ ինձ չառ կուրախացնի,
եթէ ինձ ուղղակի կը դիմեն»: «Երբ կը վերա-
դառնաք տուն, —վերջացրեց դուքսը,—հաղոր-
դեցէք ամեն տեղ այն, ինչ որ ես ձեզ ասելի:
Եւ չը կարողացայ ձեզանից իւրաքանչեւից
միկնել ձեռքս, բայց եւս պահանջ էի գրում
խօսակցել ձեզ բոլորից հետ»:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 15-ին, որ երկար տարիներ ապրել
է Չինաստանում, հետաքրքիր րացատրութիւններ է
տալիս «Temps» լրագրում այն հարցի մասին, թէ
ինչպէս կարող է Պէկինը յարաբերութիւն պահպանել
Չինաստանի միտ կէտերի հետ, հետադարձելի կը-
տրուվելուց յետոյ: Նրա տակով, այդ յարաբերու-
թիւնները պահպանվում են երկի առանձինքի միջոցով:
Այդ թեւոր հետադիւնները շատ գործածական են Չի-
նաստանում մասնաւոր անանց, առեւտրական տներ
է բանկերի մէջ, որոնք այդ միջոցով տեղեկութիւններ
են ստանում բարաւիցի գների մասին եւ ալիւ Չինա-
ցիք են հնարել զիջատիլ թաշտներին վախեցնելու
համար այն թեթեւ բաժնուկէ խօղովանները, որոնք
կապվում են օդադնայ լրատարների թեթիւ եւ սուր
ձայներ են հանում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 յունիսի

ՇԱՆԳՀԱՅ: Պրինց Տուան հրատարակեց հրո-
վարտակ, որի մէջ հրամանագրում է հարաւային
նահանգների փոխարքաներին գումարել չի-
նական հարաւային նաւատորմը եւ յարձա-
կում գործել օտարազինների նաւերի վրա
Շանգհայում: Նանկինի փոխարքան հրատարա-
կեց մի կոչ, որի մէջ «Մեծ բուռնցքի» համա-
խոհներին աւագակներ է յայտարարում եւ
հրամանագրում է գլխաւոր կարգը խանգարող
ներին: Հարաւ փոխարքանները վճռեցին հրա-
տարակել այն կոչը, որի մէջ կը յայտնեն ժա-
մանակաւոր ինքնավարութեան մասին, մինչեւ
որ իշխանութիւնը Պէկինում նորից ազաւոր-
ված կը լինի:

Պէկինից, սուրհանդակի ճիշդ աղբիւրից բերած
տեղեկութիւնները համեմատ, «Մեծ բուռնցքի»
15,000 մարդիկ են զօրքը յարձակում գործե-
ցին դեպքանանների վրա, բայց յետ մղվեցին:
Կայսրի եւ այլի կայսրուհու անձնական ամբողջ
սլլխան այժմ «Մեծ բուռնցքի» անդամներ են:
Կայսերական պրինցները պալատում մի սեղան
կանգնեցրին, ուր ժամաւազութիւնը կատար-
վում է «Մեծ բուռնցքի» ձեռով: Իրացեալ
զօրքերը յարձակում գործեցին Տեանձինի տե-
ղական մասի վրա: Յարձակման գլխաւոր նպա-
տակն է քարոքանդ անել այն մարտիկները,
որանցից ուղարկվում էին օտարազգի բնակ-
չութիւնները:

ՏԱԿՈՒ: Ալեքսէիւ Սէյմուր ծովագետ-
ները զինուորական խորհրդի մէջ վճռեցին, որ
առանց աւելի նշանաւոր պատերազմական ոյ-
ժերի անկարելի է որ եւ է բան ձեռնարկել
Պէկինը ազատելու համար, որովհետեւ դաշա-
կիցների ամբողջ ոյժը այժմ կարող է համնել
մինչեւ 20,000 հոգու, իսկ Տեանձինի եւ Պէ-
կինի միւր եւ չինական 140,000 զօրքեր են
կենտրոնացած: Գնեւրալ Նիէլս արշաւում է
Տեանձինի վրա 90,000 զօրքով:

ԵՕԿՈՋԱՄԱ: Երկաթուղին Սէուլից դէպի Չէ-
մուլպօ պատրաստ է:

ՎԻԵՆՆԱ: Ինչպէս հաղորդում են, Պէկինից
եկած սուրհանդակը պատմում է, որ աւա-
րական դեպքանութիւնը, ամենայն հաւանա-
կանութեամբ, աւելում է, իսկ աւաւրական
զօրաբաժինը գտնվում է անգլիական դեսպա-
նատան մէջ, որը ուղարկվում է ներթարկ-
վում: Պաշարները նաւորմ անհնար է:

ՀԱՄԱԳԱ: Շանգհայի հօլադական հիւպատո-
սի հետաքրքիր համեմատ, հօլադական դեսպա-
նութեան չինութիւնը քարոքանդ է արված:
Տեանձինի հօլադական հիւպատոսը հաղոր-
դում է, որ Ռօբէրտ Կարտի եւ Պէկինից մի
Ֆրանսուհու նամակները յաճախակի մատնա-
ցոյց են անում եւրոպացիների յուսահատ դրու-
թեան վրա եւ խնդրում են անյապաղ օգնու-
թիւն: Հրամանատարները Տեանձինում չեն կա-
րողանում զօրքեր ուղարկել Պէկին սկսված

անձրեւները եւ Տեանձինը պաշտպանելու անհրաժեշտութեան պատճառով Զինացիները պատուելին Կայսերական ջրանցքը Տեանձինի մօտ, երեւի, նպատակ ունենալով հեղեղ առաջացնել եւ դրանով արգելել այդ գործերին գնալ Պէկին:

Խմբագիր՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒԷՏ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎՃԱՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշուով)
տարբերութիւնը 58 րոպէ:

№ 5 զանգեր: № 3 զանգեր:

Բազումից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 1 ր.	գիշ. 11 ժ. 29 ր.
Քիֆիւս է հասնում առ. 8 ժ 53 ժ	եր. 5 ժ 34 ժ
Քիֆիւսից դուրս է գալիս 9 ժ 32 ժ	եր. 6 ժ 34 ժ
Բաթում է հասնում եր. 9 ժ 1 ժ	առ. 7 ժ 14 ժ

№ 6 զանգեր: № 4 զանգեր:

Բաթումից դուրս է գալիս առ. 7 ժ. 50 ր.	եր. 7 ժ. 59 ր.
Քիֆիւս է հասնում եր. 7 ժ 15 ժ	առ. 8 ժ 42 ժ
Քիֆիւսից դուրս է գալիս 7 ժ 18 ժ	» 10 ժ 05 ժ
Բազում է հասնում ցեր. 12 ժ 10 ժ	» 5 ժ 16 ժ

արագ զանգ

Քիֆիւսից դուրս է գալիս ցեր. 11 ժ. 19 ր.	» 11 ժ. 19 ր.
Բաթում է հասնում ցեր. 9 ժ. 41 ժ	» 9 ժ. 41 ժ
Բաթումից դուրս է գալիս ցեր. 11 ժ. 18 ժ	» 11 ժ. 18 ժ
Քիֆիւս է հասնում ցեր. 9 ժ. 30 ժ	» 9 ժ. 30 ժ

Քիֆիւսից դուրս է գալիս ցեր. 9 ժ.	» 9 ժ.
Ալեքսանդրով հասնում է ցեր. 7 ժ. 46 ր.	» 7 ժ. 46 ր.
Կարս հասնում է ցեր. 12 ժ. 56 ժ	» 12 ժ. 56 ժ
Կարսից դուրս է գալիս ցեր. 3 ժ. 29 ժ	» 3 ժ. 29 ժ
Ալեքսանդրովից դուրս է գալիս ցեր. 8 ժ. 35 ժ	» 8 ժ. 35 ժ
Քիֆիւս հասնում է ցեր. 7 ժ. 15 ժ	» 7 ժ. 15 ժ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒԱՆԳԱՆՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնոյի արձանի հանդէպ)

ա մ ե ն ո Ր, բ ա ճ ի Կ ի Ր ա Կ ի Օ Ր Ե Ր Ի Գ:
Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. վերաբուժու-
թեան, վերականգնող (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիլովանի—9—10 ժ. աչքի, ներքին և
ներքին հիւանդ.

Զ. Ի. Բարանսեան—11—12 ժ. կանանց և երե-
խայց հիւանդ.

Կ. Ի. Գրիգորով—12 1/2—1 1/2 ժ. ականջի, կոկորդի
և բերան հիւանդ.

Ա. Պ. Կարապետեան—1 1/2 ժ. ներքին և երե-
խայց հիւանդ.

Ե Ր Ե Վ Ո Ն Ե Ր Ը

Վ. Գ. Մեյերի—6—8 ժ. ներքին և երեխայց հ
Բ. Ա. Նախասարգեան—7 1/2—8 ժ.

Վար 50 կ. չքաղցրեղ ձրի համադրողի (կօն-
սիլիկոն) և օպերացիայի համար տառնձին.

Օ. Տ. Սալախիսով—տանը, ծաղկահատ և բժշ-
կական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.

Հրահանողի վերատեսուչ՝
Բժշկական ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Լ Է Օ

ՄԷԼԻԻՔ ԱՂԱԿԸ

պատմական վէպ, 753 երես.

(Մնացել են տակաւթիւ օրինակներ)

Գինը 1 ԲՈՒՐԼԻ 30 ԿՕՊԵԿ

Դիմել Քիֆիւս, «Մշակ» խմբագրութեան
5—10

Մանգիխում մի օտարուհի, որ դի-
տէ հինաւոր կերպով
Ֆրանսերէն եւ գերմաներէն, ցանկանում է
դասեր տալ Պայմանների մասին տեղեկանալ
Մարչենկոյի ամարանցու:

Պ Ե Ա Տ Ի Գ Օ Ր Ս Կ

Բժ. ՎԱՀ. ԱՐԾՐՈՒՆԻՆ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

մ ա ս ն ա գ ի տ ա բ ա Ր

ԲԳԻ, ԿՈԿՈՐԴԻ, ՔԹԻ ԵՒ ԱԿԱՆՁԻ

հիւանդները ընդունվում են առաւ. ժամը 8—12.

Հասցեն՝ Нижний бульварь, д. Фидлера. (рядомъ
армянск. церкви.) 10—10

Ընդունվում է բաժանորդագրութիւն

ՏԻԳՐԱՆ ԹՈՎՀԱՆԵՆՍԵԱՆԻ

Ա ռ ձ ե ո Ն

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԻ

առաջին մասի համար

(160 երես փաթեղի)

Բաժանորդագիրը 1 ր. 20 կ.

Դիմել Թիֆլիս. Թ. Ն. Եօաննիսյան

Քիֆիւսում կարելի է բաժանորդ գրվել Հրատարակ-
չական ընկերութեան գրասենեակում (Дорасъ Мелн-
ковская, д. Тамашева), պ. Գ. Գալստեանի մօտ:

5—5

Հ Ա Ի Լ Ա Բ Ա Ր

Կախարչական փողոց, Քիֆիւսի գնդի գործնոցի
գահիճում

Կիրակի, յունիսի 25-ին

Հ Ա Մ Ե Ր Գ

Ո. Մ. Կարա-Մուրզայի:

Հ Ր Ա Ի Է Ր

Ամսիս 25-ին, առաջիկայ կիրակի օրը, ա-
ռաւօտեան ժամը 10-ին, Կուկիայի ա. Առաւօտ-
ածին եկեղեցւում լինելու է Ժողով, տիրացու
Մարտիրոս Սիմեոնեանցին հոգեւոր կոչման
մէջ ընդունելու համար համախօսական կազմե-
լու, ուստի պատիւ ունեն սրանով հրաւիրել
յիշեալ եկեղեցւոյ ծխերին՝ ներկայ լինել Ժողո-
վին ընտրութեանը մասնակցելու համար:

Գործակալ Բ. մասին Քիֆիւսի

1—1 Գրիգոր քահանայ Մանգալուհի

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն

Տարեայ սեպտեմբերին լինելու է Ներսի-
սեան հոգեւոր դպրոցի համար հոգաբարձունե-
րի ընտրութիւն, ուստի պատիւ ունեն յայտնել
Քիֆիւսի Բ. մասի պ. պ. Ժիսկաններին, որ իւրա-
քանչիւր տան միմայն աւագագոյնը, որի տարիքը
25-ից պակաս չէ, եթէ մոտաջամբ անունը չէ
գրել տուել իր ծխատէր քահանայի ցուցակում
թող չտապէ գրել տալ մինչեւ օգոստոսի մէկը:

Գործակալ Բ. մասին Քիֆիւսի

1—6 (2) Գրիգոր քահ. Մանգալուհի

Քիֆիւսի Ժողովարան

Մանկական երեկոյթներ շարաթ
օրերը, ժամը 7-ից—10-ը:

(2. և.) 1—2



Книгоиздательскимъ товариществомъ
„ЗНАНИЕ“ (С.-Петербургъ, Невскій,
92) приобрѣтено право на изданіе со-
чиненій М. ГОРЬКАГО. Новое изда-
ніе будетъ состоятъ изъ пяти томовъ.
Будутъ введены новыя разсказы. Про-
изведенія будутъ расположены въ хро-
нологическомъ порядкѣ. Каждый томъ
можно приобрѣтать отдѣльно. Первый
и четвертый томы уже вышли.

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյ-
տուութեամբ: Մեծ արկղիկը 5 րոպէի, փոք-
րը—3 ր. և 1 ր. 50 կ:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար,
ոչնչացնում է թեփը: Դուրս է եկել նաև
բոլորովին նոր միջոց

ՁՈՒՒ ԿԱՐԸ

Երեսին ընդունվում են սպիտակութիւն տա-
լու համար, ոչնչացնում է արևի պատճա-
ռած սևութիւնը, մոռնեղը, տալիս է կա-
շտին ընդունվում են սպիտակութիւն: Այդ
գինըը չափաւոր են. մեծ սրուակը, արկղի-
կի մէջ, 2 րոպէի, փոքրը—1 ր. 50 կ.
Մտնվում են բոլոր պարֆումերական և
զեղաւաճառական խառնուրդներում: Գլխա-
ւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում,
Պուշկինայա փողոց տ. № 15, բնակա-
րան № 12. պահեստի բաժանմունքները
գտնվում են. Քիֆիւսում կովկասեան զե-
ղատան ապրանքների վաճառման ընկերու-
թեան խանութում՝ Սերեանեան հրապարակ
և նրա բաժանմունքում, Միջայլեան փո-
ղոց և Բազում, նաև Միջայլեան կամուր-
ջի վրա, Պապովի և Արիստակովի զեղատ-
ներում: Օտարաքաղաքացիների պատուէր-
ները կատարվում են անմիջապէս՝ պօստով:

85—100

ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Վ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ն Հ Ա Մ Ա Ր

ՏԱՍՆԻՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ,
երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ:

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական
Քուրսանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Քուրսանու-
թիւն համընդհանուր, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակի կա-
նոնադրութիւն և 7) Գեղարդութիւն, վառ ձեռքի ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ա-
մենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր
հիմնողի բնակարանում, Սօլալուս, Ալեքսանդր Փրիգոնովի տանը № 9, Սերգիեւսկայա
և Լեբմոնովսկայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ
ձրի ապէս եղբ. Մովսիսեանների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակա-
րանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисть, С. П. Магуляницъ, (2. ր.) 1—25



Հ. ԽԱՆԵ-ԱՂԱՆՆՅԻ

առաւ Էլեկտրոն գիշեր-ցերեկ ԻՆՔՆ ԻՐԱՆ Լուր է բարձրացնում ցածր տեղերից Վեհա-
Դիմել Լ. Ханъ-Агову, Тифлисть, Великокняжеская ул. 37.

Լ. ԽԱՆԵ-ԱՂԱՆՆՅԻ

Գիւրգանտեսական մեքենաներ 250 նկարով. վաճառականների տոմ 50 կոպէկ. 25—30

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու
շաբաթը մի անգամ:

Եւ հալառակը՝ Բաթումից Մարսէլ, մասնով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս: Մեկնում է
Բաթումից չորեքշաբթի, 1/18 յուլիսի ՍԻՐԿԱՍԻ չորեքշաբթի, նաւապետ ԳԱՐՐԻԳԻ Եւ այս-
պէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են օտարականից
պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտիպէրի մէջ, ընդու-
նելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ուսանալու հա-
մար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալատարներին:

ԲԱՌՈՒՄԻՄ—պ. Վիկտոր ԳԱՐՆՈՐ, Նաբէլէմայա թիֆլիսիում—պ. Օ. Գ. Բարե-
կնդանեանին, Սիմի փող. իջնափարտիսով և Մայսուրաձէլ: քաղաքապետ ԲԱԳՈՒՄ—եղբ.
Վ. և Ի. Մուխոմեանների, Նաբէլէմայա փողոց, տուն Կրասնիկովի, № 27: ՆՕՎՈՐՈՍ-
ՍԻՅԱ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Կ. Զ.) 19—20

Advertisement for Kakao (Chocolate) featuring the text: ПИТАТЕЛЬНЫЙ НАПИТОК, Kakao, Шоколад. The ad describes it as a nutritious drink made from cocoa beans, suitable for all ages, and mentions its availability in various forms (bars, powder, etc.).

Advertisement for 'ՄԱՆԳԼԻՍՈՒՄ' (Mangalium) featuring the text: ՄԱՆԳԼԻՍՈՒՄ, Ջուր, Զուգորդակցութիւն. The ad describes it as a medicinal drink made from various fruits and herbs, beneficial for health and digestion. It mentions that it is available in various forms (bars, powder, etc.) and can be ordered from various sources.